

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՈՐԱՆ

ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ

ԳՈՒՅՔԱՅԻՆ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՄ

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական ազրարային համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Հակոբի Բայադյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Բորիսի Սալնազարյան

տնտեսագիտության թեկնածու
Գրիգոր Պարզևի Այվազյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական)
համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2014 թվականի ապրիլի 29-ին, ժամը 15³⁰-ին՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք.Երևան, Նալբանդյան փող., 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թվականի մարտի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, տնտեսագիտության
դոկտոր, պրոֆեսոր



L. ԱՍԼԱՆՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ազգարային ոլորտի արտադրական գործընթացների և գույքի օգտագործման ռիսկերի կառավարման ու դրանց հետևանքների կարգավորման գործում մեծ դեր է խաղում ապահովագրությունը: Ուստի այդ առումով էլ ազգարային ոլորտի պետական կարգավորումը կապված այդ ռիսկերի ապահովագրության ներդրման և զարգացման հետ, հանդիսանում է պետության կողմից գյուղատնտեսական արտադրանքի, հումքի, պարենի և այլ մթերքների արտադրության, վերամշակման և իրացման գործընթացների խթանման կարևորագույն պայման:

Հայաստանի Հանրապետությունում ազգարային հատվածի զարգացմանը, այդ ոլորտում գույքային ապահովագրության զարգացմանն ու ռիսկերի նվազեցմանը, գյուղատնտեսությունում տնտեսվարողների եկամուտների ավելացմանը, ինչպես նաև պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը մեծապես կնպաստի գյուղատնտեսությունում ապահովագրության համակարգի ներդրումը, որի գործունեությամբ էլ կպայմանավորվի տնտեսվարողների, ապահովագրող ընկերությունների և պետության միջև համագործակցության արդյունավետությունը, այդ բնագավառում գյուղատնտեսական ռիսկերի դիվերսիֆիկացումը:

Գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ներդրումը ժամանակատար և ծախսատար գործընթաց է, որի ընթացքում անհրաժեշտ է լուծում տալ հիմնախնդիրներին և արդյունավետ օգտագործել ընձեռված հնարավորությունները, իսկ ներդրում էլ պետք է իրականացվի փուլային եղանակով: Այդ իսկ պատճառով գյուղատնտեսական ապահովագրության համակարգի զարգացումը մնում է շուկայական տնտեսության պայմաններում ազոտարդյունաբերական արտադրության կալուծության ապահովման համար առավել կարևոր գործոնը: Գյուղատնտեսական ապահովագրության արտադրողը, ինչպես նաև ցանկացած ազատ ձեռնարկատեր, նյութական և աշխատանքային ռեսուրսներ ներդնելով, իրավունք ունի իր արտադրական գործունեության արդյունքում ակնկալել շահույթի ստացում: Ի տարբերություն նյութական արտադրության այլ ոլորտների, գյուղատնտեսությունը հանդիսանում է կապիտալի ներդրման ռիսկային ոլորտ կապված պատահական, նախօրոք անկանխատեսելի կլիմայական և այլ իրադարձությունների հետ:

1990թ. գյուղատնտեսական կազմակերպությունների պարտադիր գույքային ապահովագրության (կենդանիների, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի) չեղյալ համարելը չուղեկցվեց հուսալի ապահովագրական պաշտպանվածության պատշաճ կազմակերպման համակարգի ստեղծմամբ: Գործադիր իշխանության կողմից ընդունված առանձին որոշումները չունեն համակարգային բնույթ: Համապատասխան իրավական-նորմատիվային բազայի և դրանց իրականացման մեխանիզմի բացակայությունը գյուղատնտեսական ապահովագրության արտադրողներին խիստ կախվածության մեջ դրեց շուկայի և բնակլիմայական պայմանների տատանումներից: Վերջին հաշվով, այդ ամենն ազդեց առանձին գյուղատնտեսական կազմակերպությունների և ֆերմերային տնտեսությունների մեծ մասի ֆինանսական վիճակի վրա:

Վերոհիշյալները և միջազգային փորձի ուսումնասիրությունը հիմք են հանդիսանում եզրակացնելու, որ ազգարային համակարգում գույքային ապահովագրությունը և դրա հետ կապված ռիսկերի ուսումնասիրումն ու կառավարումը ռազմավարական կարևոր նշանակություն ունեն ոլորտի կայուն զարգացման ապահովման գործում, ինչպես նաև գյուղական տարածքների բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենային ապահովության հիմնախնդիրների լուծման հարցում, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը և հրատապությունը, որը բխում է ԳԴ-ի ազգարային համակարգում գույքային ապահովագրության հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը ազդարարյին համակարգում գույքային ապահովագրության ներկա վիճակի համալիր ուսումնասիրման, խոչընդոտող գործոնների բացահայտման, միջազգային առաջավոր փորձի տեղայնացման արդյունքում առաջարկել առկա խնդիրների աստիճանական լուծմանն ուղղված քաղաքականության հիմնական ուղիների և դրանց համահունչ կառուցակարգերի մշակում:

Նշված նպատակադրման իրականացման համար առաջարկվել են հետևյալ կարևորագույն խնդիրները.

- ուսումնասիրել ազդարարյին համակարգի ռիսկերի ընդհանուր բնութագիրը և վերլուծել դրանց կառավարման բնագավառի միտումները,

- ուսումնասիրել ապահովագրության միջոցով ազդարարյին համակարգի ռիսկերի հիմնախնդիրները, դրա կառավարումը, այդ բնագավառի միջազգային փորձն ու տեղայնացումը,

- ուսումնասիրել գույքային ապահովագրության կիրառման հնարավոր ուղիները գյուղատնտեսական կազմակերպությունների գործընթացների ռիսկերի կառավարման գործում,

- բացահայտել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի, կենդանիների հետ կապված ռիսկերը և ապահովագրության միջոցով վերլուծել դրանց կառավարման միջազգային փորձն ու տեղայնացման հնարավորությունները,

- մշակել և առաջարկել ՀՀ ազդարարյին ոլորտում գույքային ապահովագրության ներդրմանը նպաստող մեթոդական մոտեցումներ ու կառուցակարգեր և հիմնավորել դրանց անհրաժեշտությունը,

- բացահայտել և առաջարկել ՀՀ ազդարարյին ոլորտում գույքային ապահովագրության ներդրման և զարգացման ուղիները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ է հանդիսացել ՀՀ ազդարարյին համակարգում գույքային ապահովագրությունը, մասնավորապես գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի, գյուղատնտեսական կենդանիների, վերամշակող կազմակերպությունների, շենք-շինությունների, գյուղատնտեսական տեխնիկայի ապահովագրությունը, իսկ առարկան՝ ՀՀ ազդարարյին համակարգում գույքային ապահովագրության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության համար տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասականների, գյուղատնտեսական ռիսկերի կառավարմանն ու ապահովագրական համակարգի ներդրմանը նպաստող հայրենական և արտասահմանյան հեղինակների գիտական աշխատությունները, մասնագիտական հրապարակումները, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ընդունված իրավական և նորմատիվային ակտերը, վերլուծական նյութերը և տվյալ ոլորտը կարգավորող իրավական այլ նորմատիվային ակտերը:

Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվական նյութերը, ծրագրերը և հաշվետվությունները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, տրամաբանական, համեմատական ու գործոնային վերլուծությունների, գծապատկերային գնահատումների, հարցում-հետազոտությունների, խմբավորումների և այլ մեթոդներ:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը:

Հետազոտության արդյունքների հիմնական գիտական նորույթը կայանում է նրանում, որ ՀՀ ազդարարյին համակարգում գույքային ապահովագրության ներդրման արդյունավետությունը այսպիսովորոշ նախարարների համակարգային ուսումնասիրման և վերլուծության արդյունքում տրվել են պետական-մասնավոր հատվածների համագործակցության, փոխադարձ ապահովագրության, սուբսիդավորման, ինչպես նաև իրականացվելիք քաղաքականության հիմնական ուղղություն-

ները: Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները պայմանավորված են հետազոտության շրջանակներում առաջադրված խնդիրներով, մասնավորապես.

- բացահայտվել են 33 ագրարային համակարգում տարերային ու բնական աղետների ռիսկերով պայմանավորված գույքային ապահովագրության (մասնավորապես գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի և կենդանիների) առանձնահատկությունները և առաջարկվել են դրանցից բխող ապահովագրական համակարգի ներդրման հնարավոր ուղիները,

- բացահայտվել են գույքային ապահովագրության ուղղությամբ իրականացվելիք քաղաքականության հստակեցման համատեքստում ագրարային ոլորտի առաջընթացը խոչընդոտող գործոնները և մշակվել է այդ ոլորտում տվյալ ապահովագրության գործընթացի խթանմանը մեծապես նպաստող գործոնների ցանկը (ապահովագրական ընկերությունների նկատմամբ պետական հովանավորչական քաղաքականության իրականացումը, միջազգային փորձի տեղայնացումը, մարքեթինգային, ինչպես նաև տեղեկատվական, խորհրդատվական, սպասարկման աշխատանքների բարելավումը, ներառյալ՝ ռիսկերի գնահատումը պետական նպատակային ծրագրի իրականացման միջոցով և այլն),

- հիմնավորվել է 33-ում ապահովագրական ռիսկերի դիվերսիֆիկացման ուղղությամբ պետական օգնության անհրաժեշտությունը, որին համահունչ մշակվել են մեթոդական մոտեցումներ՝ ուղղված օրենսդրական և տնտեսական դաշտի ձևավորմանը, փուլային եղանակով գյուղատնտեսության ապահովագրության ներդրմանը և ոլորտում առկա խնդիրների աստիճանական հանգուցալուծմանը,

- բացահայտվել է հիմնավորվել է ագրարային ոլորտում գույքային ապահովագրության ներդրման ու զարգացման անհրաժեշտությունը, պայմանավորված գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմամբ և դրանց համահունչ առաջարկվել են դրանցում փոխադարձ ապահովագրության կազմակերպման հնարավոր ուղիները:

Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը և կիրառումը:

Ատենախոսության արդյունքներն ունեն տեսական և կիրառական նշանակություն այնպիսի հիմնախնդիրների լուծման գործում, որոնք վերաբերվում են ագրարային ոլորտում գույքային ապահովագրության գործընթացի խթանմանը, գյուղատնտեսական և վերամշակման արտադրական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, ռիսկերի կառավարման կատարելագործմանը: Ատենախոսությունում տրվել են նաև գիտագործնական նշանակություն ունեցող առաջարկություններ ուղղված գյուղատնտեսական ռիսկերի գծով Հայաստանի յուրաքանչյուր տարածաշրջանի տվյալների բազայի ստեղծման, ոլորտի կառավարման արդյունավետության գնահատման մեթոդական մոտեցումներին: Ատենախոսության արդյունքային դրույթների հիման վրա կատարված առաջարկությունները կարող են օգտակար լինել պետական կառավարման մարմինների, գյուղատնտեսությունում ռիսկերի կառավարման ու ապահովագրության ոլորտներում քաղաքականություն մշակող կառույցների, ինչպես նաև ատենախոսության թեմային առնչվող գիտահետազոտական աշխատանքներով զբաղվող մասնագետների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության հիմնական արդյունքները քննարկվել են ՀԱԱՀ-ի «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի նիստում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են հեղինակի 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը շարադրված է 188 էջի վրա ներառյալ գրականության ցանկը, այն պարունակում է 16 աղյուսակ և 13 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ԴԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանում հիմնավորվել է ընտրված թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, ուսումնասիրման առարկան և օբյեկտը, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Ապահովագրությունը, դրա առանձնահատկությունները և ազդարային համակարգի ռիսկերի կառավարումը» գլխում ներկայացված են ազդարային համակարգի ռիսկերի դրսևորման ձևերը և դրանց տևությունը, ապահովագրության միջոցով ազդարային համակարգի ռիսկերի կառավարումը տնտեսապես զարգացած և զարգացող երկրներում, գույքային ապահովագրության ձևավորումը և առանձնահատկությունները ԳՀ-ում:

Ազդարային ոլորտի ռիսկերի կառավարման և դրանց հետևանքների կարգավորման գործում մեծ դեր է խաղում ապահովագրությունը: Այդ պատճառով էլ ազդարային ոլորտի պետական կարգավորումը կապված այդ ռիսկերի ապահովագրության ներդրման և զարգացման հետ, հանդիսանում է պետության կողմից գյուղատնտեսական արտադրանքի, հումքի, պարենի և այլ մթերքների արտադրության, վերանշակման և իրացման գործընթացների խթանման կարևորագույն պայման:

Գիտատեխնիկական առաջընթացը հնարավորություն է ընձեռում բացահայտել և գնահատել բազմաթիվ ռիսկերի տեսակներ, որոնց դրսևորման պատճառների, պատճառահետևանքային կապերի բացահայտումը հասարակական կյանքում և դրանց ներգործությունը սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում ունի կարևորագույն նշանակություն:

Գյուղատնտեսական արտադրությունը բնութագրվում է բարձր ռիսկայնությամբ, ինչը պայմանավորված է միջազգային շուկայում գյուղմթերքների գների անկայունությամբ, ռեսուրսների, այդ թվում՝ էներգակիրների գնաճով, ոլորտում իրականացվող քաղաքականության փոփոխություններով, որը կարող է հանգեցնել տնտեսավարողների եկամուտների կտրուկ անկմանը, մրցակցային հնարավորությունների նվազմանը: Բացի այդ, այլ ոլորտների համեմատ, գյուղատնտեսությունը, առավելապես ենթարկվում է բնակլիմայական պայմանների ազդեցությանը, որով էլ հիմնականում պայմանավորվում է այդ ոլորտի խոցելիությունը:

Ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դրանք դասակարգվում են հաշվի առնելով ռիսկերը բնութագրող տարբեր հատկանիշները: Գոյություն ունեն ռիսկերի դասակարգման տարբեր եղանակներ՝ մասնավորապես, դրանցից ուշադրության են արժանի.


1. Ռիսկերի ավանդական դասակարգումը:
2. Ձեռնարկատիրական գործունեության գծով ռիսկերի դասակարգումը:
3. Ֆինանսական ոլորտի ռիսկերի դասակարգումը:

Ռիսկերի դասակարգումն ըստ տեղի ունենալու պատճառների և նրանց հետ կապված վնասների ներկայացված է գծապատկեր 1-ում:

Սիևճույն ժամանակ նշենք, որ ոչ այնքան կարևոր է բազմաթիվ և բազմաբնույթ ռիսկերի հստակ դասակարգումը, քանի որ այդ ուղղությամբ կարող են լինել և փաստացի առկա են միանգամայն տարբեր մոտեցումներ, որքան կարևոր է դրանց արդյունավետ, գիտականորեն հիմնավորված կառավարումը:

Ռիսկերի կառավարման բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ զարգացած երկրներում առավել մեծ ուշադրություն է դարձվում հնարավոր անբարենպաստ հետևանքներ ունեցող ռիսկերի կանխմանը (կանխարգելմանը), իսկ ավելի թույլ զարգացած երկրներում հետևանքների վերացմանը (մեղմմանը): Բացի այդ, զարգացած և միջին եկամուտներ ունեցող պետություններում առանձնակի ուշադրություն է դարձվում ռիսկերի ապահովագրութ-

յանը, որպես ռիսկերի կառավարման կարևորագույն բաղադրիչի: Այդ երկրներում ծնավորված են ապահովագրության գործուն համակարգեր: Ուստի ապահովագրության միջազգային փորձի ուսումնասիրումը, վերլուծությունը և տեղայնացումն ունի կիրառական կարևոր նշանակություն:



Գծապատկեր 1. Ռիսկերի և վնասների դասակարգումն ըստ տեղի ունենալու պատճառների¹

¹ Федорова Т. А. "Страхование", М.: "Экономист", 2006г., с.101.

Ընդ որում, բազմաթիվ երկրներում նշված ապահովագրությունն իրականացվում է պետության ֆինանսական աջակցությամբ՝ ապահովագրավճարների սուբսիդավորման միջոցով, ինչը չի հակասում ԱՅԿ-ի (Առևտրի Դամաշխարհային Կազմակերպության) պահանջներին:

Այսպիսով, միջազգային փորձի ուսումնասիրությունը, որը վերաբերվում է գյուղատնտեսական ռիսկերի կառավարմանը՝ կապված ապահովագրական համակարգի գործունեության հետ, անշուշտ, մեծապես կնպաստի ճիշտ կողմնորոշվելու մեր երկրում հստակ քաղաքականության մշակման, ինչպես նաև դրա իրականացումն ապահովող մեխանիզմների ընտրության հարցում:

Ատենախոսության երկրորդ՝ «Մշակաբույսերի բերքի և կենդանիների ապահովագրությունը և դրա կիրառությունը գյուղատնտեսական ռիսկերի կառավարման գործում» գլխում ներկայացված են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի և կենդանիների ապահովագրության հետ կապված ռիսկերի կառավարման ընդհանուր բնութագիրը և խնդիրները ԳՅ-ում, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի ապահովագրությունը և դրանց ռիսկերի կառավարումը, գյուղատնտեսական կենդանիների ապահովագրությունը և դրանց ռիսկերի կառավարումը:


Շուկայական տնտեսության իրավահարաբերությունների անցման բարդ գործընթացում համընդհանուր օրինաչափությունների հետ մեկտեղ, յուրաքանչյուր պետության տնտեսական վերափոխումները բխում են տվյալ երկրի առանձնահատկություններից, ուստի դրանց ուսումնասիրությունը և վերլուծությունը հնարավորություն է ընձեռում այս կամ այն բնագավառում առավել արդյունավետ քաղաքականության մշակման ու իրականացման համար: Նշվածն ամբողջությամբ վերաբերում է նաև երկրի գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրմանը: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ տնտեսական ռեֆորմից հետո այդ ուղղությամբ գործնական քայլեր դեռևս գրեթե չեն իրականացվել, ուստի նշված գործընթացի զարգացմանը խոչընդոտող գործոնների բացահայտումը, ծառայած հիմնախնդիրների «համազուցալուծումը» արդիական է և հրատապ, քանի որ գյուղատնտեսությունում ապահովագրական գործում համակարգի ներդրումը ոլորտի զարգացման կարևորագույն նախադրյալներից է: Դրա մասին է վկայում նաև արտերկրների (այդ թվում անցումային տնտեսության երկրների) փորձի ուսումնասիրությունը: Զարգն այն է, որ ինչպես նախկին տնտեսակարգի պայմաններում, այնպես էլ հողի սեփականաշնորհումից (մասնավորեցումից) ի վեր, գյուղատնտեսությունում կուտակվել են բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնք, գյուղատնտեսական ապահովագրության համակարգի բացակայության հետ մեկտեղ, խոչընդոտում են ոլորտի զարգացումը, պայմանավորում են վերջինիս խոցելիությունը և մրցունակության դեռևս ոչ բավարար մակարդակը:

Նշենք, որ ԳՅ գյուղատնտեսության նախարարության կողմից դեռևս 2004թ.-ին ներկայացված բյուջետային հայտում հիմնավորվել է հանրապետության 870 համայնքներում բնակլիմայական գործոնով պայմանավորված ռիսկերի զգալի մասն իրականացումը, սակայն այդ աշխատանքներն առ այսօր չեն կատարվել, ինչը սահմանափակում է հանրապետությունում գործող ապահովագրական ընկերությունների գործունեության ծավալումը (2013թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում են 7 ապահովագրական ընկերություններ):

Նշված ընկերությունները, ըստ մեր կողմից կատարված ուսումնասիրությունների, գյուղատնտեսության ապահովագրությամբ գրեթե չեն զբաղվում (գյուղատնտեսության ապահովագրությունը, ըստ գնահատման, կազմում է ընկերությունների ապահովագրական պորտֆելների շուրջ 0,1%-ը), ուստի ակնհայտ է, որ այդ գործընթացը խոչընդոտող գործոնների «հաղթահարման» համար պահանջվում է պետական միջամտություն (օժանդակություն) մասնակի սուբսիդավորման և այլ եղանակներով:

Ապահովագրական ընկերությունների գործունեությունը²


	2007 ³	2008	2009	2010	2011	2012
Արտոնագրված ապահովագրական ընկերությունների քանակը	10	12	12	11	8	7
Արտոնագրված ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալը, մլն.դր	4639,3	6615,5	10938,2	12116,5	11933,2	11430,0
Գործող պայմանագրերի քանակը, միավոր	40080	49639	50768	50484	207246	406728
Ապահովագրավճարների մուտքերը, մլն. դրամ	4813,6	7769,1	8102,6	8233,3	22393,2	35524,8
Հատուցումների գումարը, մլն.դր	645,3	1375,0	1900,7	1745,5	8140,9	14487,0
Ապահովագրական պահուստները, մլն. դր	1625,9	2152,7	2719,3	2917,0	8598,8	15611,6
Պարտավորությունների ծավալը բոլոր գործող պայմանագրերով, մլն. դր	1131014,2	2354745,8	3390633,0	3052438,9	3696072,0	6295988,1



Գծապատկեր 2. Ապահովագրավճարների և հատուցումների փոփոխությունը 2007-2012թթ.

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2013թ., էջ 406:

³ Հայաստանի վիճակագրական տարեգիրք: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2012թ., էջ 400:



Գծապատկեր 3. Ապահովագրական ընկերությունների գործող պայմանագրերի քանակը 2007-2012թթ.⁴

Հանրապետության գյուղատնտեսությունում ապահովագրական շուկայի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ գյուղացիական տնտեսությունների կողմից տվյալ ծառայության նկատմամբ պահանջարկը դեռևս մեծ չէ, ինչը բացատրվում է մի շարք հանգամանքներով, որոնցից մասնավորապես կարելի է առանձնացնել գյուղմթերք արտադրողների վճարունակության ցածր մակարդակը:

Ներկայումս, երբ հանրապետությունում, փաստացի, գործում է կամավոր ապահովագրության համակարգ, բազմաթիվ տնտեսավարողներ դարձյալ ապավինում են «կենտրոնից» ստացվելիք օգնությանը (համայնքից, մարզպետարանից, պետությունից կամ բարեգործական կազմակերպություններից): Դրա մասին են վկայում, ինչպես մեր կողմից մի շարք համայնքներում անցկացված հարցազրույցները, այնպես էլ անկախ փորձագետների ուսումնասիրությունների արդյունքներով հրապարակումները (օրինակ ՕբսՖամի կողմից 2007թ. հրապարակված Ս. Մանուկյանի «Սոցիալական կապիտալի զարգացումը հայկական գյուղում» մենագրությունը): Այսինքն, XX դարում տասնամյակներ շարունակ հանրապետությունում գյուղատնտեսության ապահովագրությունն, ըստ կազմակերպական ձևի, մշտապես եղել է պարտադիր: Որոշ տարիների, կամ որոշ ռիսկերի հանդեպ գոյություն ունեցող կամավոր ապահովագրությունն իր էությամբ կրում է ժամանակավոր բնույթ, այն պարտադիր ապահովագրական հիմնադրամի ձևավորման անցողիկ ձևն է: Արմատավորված այդպիսի մոտեցումը հոգեբանական «արգելք է» հանդիսանում բազմաթիվ պոտենցիալ ապահովագրվողների շրջանում, ինչը, անշուշտ, խոչընդոտում է վերջինների ապահովագրումը:

Այդ առումով կարելի է փաստել, որ ապահովագրման «ավանդույթի» (որոշ վերապահումներով կարելի է ասել ապահովագրական «մշակույթի») ներդրումը նույնպես ժամանակի խնդիր է և, գտնում ենք, նրա ձևավորումն ագրարային հատվածում կապված է նաև այլ ոլորտներում (առողջապահություն, բնապահպանություն և այլ) ապահովագրության պարտադիր համակարգի ներդրման գործընթացի հետ (ինչպես արդեն գիտենք այդպիսի դրական փորձ արվել է ԱՊՊՎ-ն, որն ուժի մեջ է մտել 2011թ. հունվարի 1-ից): Այդ մասին են փաստում նաև մի շարք ապահովագրական ընկերությունների տնօրեններ:

Մյուս խոչընդոտող գործոնը, մեր համոզմամբ, ապահովագրությունը կարգավորող օրենսդրության անկատարությունն է: Շուկայական տնտեսությանն անցման

⁴ Գծապատկերները կառուցվել են հեղինակի կողմից ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա:

փուլում այն աստիճանաբար կատարելագործվում էր, և այդ գործընթացի խթանման առումով առանձնակի կարևորվում է ԴՀ Ազգային ժողովի կողմից 2007թ-ի ապրիլի 9-ին ընդունված «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ԴՀ օրենքը (22-ը մայիսի, 2007թ., ԴՕ-177-Ն), որի հիմնական նպատակներն են, ըստ օրենքի նախաբանի՝ «...ապահովադիրների և ապահովագրված անձանց և շահառուների իրավունքների պաշտպանությունը, ապահովագրական համակարգի կայուն զարգացումը, հուսալիությունը և բնականոն գործունեության ապահովումն, ինչպես նաև ապահովագրական գործունեություն իրականացնողների միջև ազատ տնտեսական մրցակցության համար հավասար պայմանների ստեղծումը»⁵:

Հաջորդ խոչընդոտող գործոնը, ըստ մեր կողմից կատարած ուսումնասիրությունների, հանրապետությունում գործող ապահովագրական ընկերությունների կողմից առաջարկվող ապահովագրական պրոդուկտի սահմանափակումներն են, ինչպես նաև որոշակի անվտանգությունը գյուղատնտեսության ապահովագրության նկատմամբ և այդ բնագավառում անհրաժեշտ փորձի բացակայությունը:

Անվտանգության պատճառներից է նաև այն փաստը, որ 1991-1996թթ. ապահովագրման գործունեությունը Հայաստանում, ըստ էության, իրականացվում էր օրենսդրական դաշտի գրեթե բացակայության պայմաններում, ինչը հանգեցրեց ապահովագրողների որպես խոչընդոտող գործոն, ինչը վկայում է այն մասին, որ ապահովագրական համակարգի ձևավորման ու զարգացման գործընթացը ագրարային ոլորտում պետական արդյունավետ կարգավորման և համակարգման կարիք ունի:

Նշենք նաև, որ Հայաստանի գյուղատնտեսությունը դիվերսիֆիկացված է, զարգացած են ինչպես բուսաբուծություն, այնպես էլ անասնապահության ենթաճյուղերը: Ընդ որում, վերջին տարիների տվյալներով, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 60%-ը բաժին է ընկնում բուսաբուծությանը, որն ինչպես նշվել էր, առավելապես մեծ չափով է ենթարկվում անբարենպաստ բնակլիմայական պայմանների ներգործությանը: Ակնհայտ է, որ գյուղատնտեսական արտադրանքի ամենամյա կորուստները վատթարացնում են գյուղատնտեսական արտադրությանը զբաղվող տնտեսավարողների սոցիալ-տնտեսական վիճակը: Դա է պատճառը, որ ապահովագրական համակարգը հանդիսանում է շուկայական տնտեսության կարևորագույն ինստիտուցիոնալ կառույցներից մեկը:

«Բուսաբուծությունում ապահովագրության իրականացման ժամանակ ապահովագրական գումարի որոշումը հանդիսանում է ամենաբարդ խնդիրներից մեկը, քանի որ գույքային ապահովագրության այլ ենթատեսակների դեպքում ապահովագրության օբյեկտը, որի հիման վրա սահմանվում է ապահովագրական գումարը, ակնհայտ է, ապա այս դեպքում ապահովագրվում է դեռ չստացված (հիփոթեթիկ) բերքը»⁶:

Գյուղատնտեսության ոլորտում և հատկապես գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի ապահովագրության ժամանակ ապահովագրական ռիսկեր են հանդիսանում այն գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ցածր մակարդակը կամ բերքի կորուստը, որոնք աճեցվում են չպաշտպանված զրոնտում: Իսկ բերքի կորստի պատճառներ կարող են հանդիսանալ բնական աղետները, տվյալ

⁵ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ԴՀ օրենք, էջ 1:

⁶ Доклад о мировом развитии 2002 года Создание институциональных основ рыночной экономики (пер. с англ.) -М.: изд. "Весь мир", 2002 г. с.43.

տեղանքի համար արտասովոր կլիմայական և եղանկային պայմանները, կամ այլ բնական երևույթներ, հրդեհը, վայրի կենդանիների և թռչունների կողմից բույսերի ոչնչացումը, հիվանդություններն ու վնասատուները, պատնեշների փլուզումը պեստիցիդների ոչ ժամանակին կիրառումը և այլն: Կորուստները կարող են հասնել պտղատուների մոտ 35-50%, հացահատիկ 15-20%, խաղողի վազ՝ 30-35%, բանջարանոցային մշակաբույսեր՝ 25-30%:

Գյուղատնտեսական կենդանիների ապահովագրությունը, մշակաբույսերի և բազմամյա տնկարկների ապահովագրության համեմատությամբ դրսևորվում է պակաս ռիսկայնությամբ, փոքր ծախսատարությամբ, մեթոդաբանության դյուրինությունամբ, ուստի կազմակերպական առումով այն կարելի է համարել ավելի մատչելի:

Գյուղատնտեսական կենդանիների և արտադրանքի ապահովագրության ժամանակ վնասի հատուցման հաշվառման համար հիմք է հանդիսանում տվյալ տարածաշրջանի շուկայական գինը, ի նկատի ունենք վաճառքի գինը: Եթե ընտանի կենդանիները և գյուղատնտեսական արտադրանքը նախատեսված են եղել վաճառքի համար, ապա վնասի հատուցումը կկազմի շուկայական արժեքը՝ հանելով վերանշակման, պահպանման և փոխադրման ծախսերը, քանի որ գույքը կորել էր մինչև այդպիսի ծախսեր կատարելը: Երբ կորած սեփականությունը նախատեսված էր տեղում օգտագործման համար (կաթնատու կովեր, սննդամթերքներ), ապա այն պետք է վերականգնվի: Այս դեպքում շուկայական գինը մեծանում է այն չափով, որն անհրաժեշտ է փոխհատուցվող սեփականությունը ֆերմա հասցնելու համար: Արտասահմանյան պրակտիկայում ֆերմերի համար սահմանվում են «երաշխավորված» գներ: Եթե ֆերմերը չի կարող վաճառել իր ապրանքը դրա կորստի պատճառով, ապա նա կորցնում է շուկայական և «երաշխավորված» գների միջև տարբերությունը: Այդ դեպքում փոխհատուցման ժամանակ հաշվի է առնվում այդ տարբերությունը: Հատուցման համար նախատեսված գումարում կատարվի ավելի բարձր գին՝:

Տվյալ տեսակի ապահովագրության համար ապահովագրական դեպք է համարվում կենդանիների անկումը և կորուստը, որը տեղի է ունեցել՝

տարերային աղետների

- կենդանիների տարբեր հիվանդությունների հետևանքով:

Այսպիսով, գյուղատնտեսական կենդանիների ապահովագրությունը նույնպես ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են կենդանիների տեսակի, պահվածքի, բնակլիմայական պայմանների, տարիքային խմբի և մի շարք այլ առանձնահատկություններով:

Ատենախոսության երրորդ՝ «Գույքային ապահովագրության ներդրման և զարգացման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում» գլխում հիմնավորվել է գույքային ապահովագրության ներդրման անհրաժեշտությունը ՀՀ ագրարային ոլորտում, կատարված ուսումնասիրությունների արդյունքներով ներկայացվել են գույքային ապահովագրությունը և դրա կիրառման հնարավոր ուղիները ՀՀ ագրարային ոլորտում, առաջարկվել են գույքային ապահովագրության ներդրման և զարգացման ուղիները ՀՀ գյուղատնտեսության բուսաբուծության և անասնաբուծության ոլորտներում:

Ապահովագրության այս տեսակի իրականացման ընթացքում գույք հասկացության տակ անհրաժեշտ է նկատի ունենալ ոչ միայն կոնկրետ առարկան կամ իրը (տուն, աթոռ, սեղան և այլն), այլ նաև իրերի, առարկաների և ապրանքների խմբեր,

⁷ Ахведиани Ю.Т., Шахов В.В. "Страхование", Москва, "ЮНИТИ-ДАНА", 2008г., с.263.

տրանսպորտային միջոցներ, գյուղատնտեսական մշակաբույսեր և կենդանիներ, արժեթղթեր, քաղաքացիների ունեցվածք, ֆինանսական հիսկեր և այլն:

ՀՀ գյուղատնտեսական արտադրությունում ռիսկերի կառավարման բնագավառում արդյունավետության բարձրացումն ունի առանձնահատուկ կարևոր ռազմավարական նշանակություն՝ հաշվի առնելով գյուղատնտեսության ոլորտի դերը երկրի պարենային անվտանգության, գյուղական արքատության հաղթահարման, տեղական արտադրության հաշվին պարենամթերքով ինքնաբավության (պարենային անկախության) մակարդակի բարձրացման, պարենամթերքի ներքին շուկայի կարգավորման, արտաքին առևտրաշրջանառության ներկայիս խիստ բացասական հաշվեկշռի բարելավման, սպառողների առողջության համար սնուցման լիարժեքության ապահովման տեսանկյունից:

Չնայած ռիսկերի կառավարման բնագավառում արձանագրված դրական տեղաշարժերին, առավել արդյունավետ միջոցներից մեկը գյուղատնտեսության ապահովագրությունն է: Այդ գործընթացի խթանման հնարավորությունների բացահայտումն ու զնահատումը հնարավորություն է ընձեռում ոլորտում իրականացվող քաղաքականության հստակեցման համար, ինչը ապահովագրական գործուն համակարգի ներդրման արդյունավետության հիմնական նախադրյալներից է:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ պետության կողմից ներկայումս և առաջիկայում ուղղորդվող ֆինանսական միջոցների մի մասը, որը նախատեսվում է գյուղատնտեսական հողօգտագործողների անմիջական ֆինանսավորման սուբսիդավորման համար, նպատակահարմար է հատկացնել հանրապետությունում ռիսկերի զնահատման աշխատանքների համար, իսկ մնացած մասը գյուղատնտեսության ապահովագրության համաֆինանսավորմանը:


Գյուղատնտեսությունում ապահովագրության գործուն համակարգի բացակայությունը դեռևս հնարավորություն չի ընձեռում արդյունավետ դիվերսիֆիկացնել ռիսկերը տնտեսավարողների, ապահովագրող ընկերությունների և պետության միջև: Ուստի հանրապետության տնտեսության ազրարային հատվածի հետագա զարգացումը մեծապես պայմանավորված է ռիսկերի կառավարման բնագավառում արդյունավետ, հստակ ազրարային քաղաքականության մշակմամբ ու իրականացմամբ:

Գույքային ապահովագրության ժամանակ կարևոր նշանակություն ունի ապահովագրվող գույքի զնահատումը, որի արդյունքների հիման վրա որոշվում է ապահովագրական գումարը: Գույքի զնահատումն սկսվում է զնահատվող գույքի արժեքի որոշումից:

Ինչպես յուրաքանչյուր ապրանք, այնպես էլ անշարժ գույքն ունի իր յուրահատուկ շուկան, որն իրենից ներկայացնում է մեխանիզմների մի որոշակի հավաքածու, որոնց միջոցով փոխանցվում են սեփականության իրավունքները և նրանց հետ կապված շահերը, ինչպես նաև սահմանվում են զեները:


Անշարժ գույքի շուկան ունի հետևյալ պարզեցված մոդելը (զծապատկեր 4.)⁸

⁸ Джек Фридман, Николас Ордуэй “Анализ и оценка приносящей доход недвижимости” Пер. с англ. – М.: Дело, 1997г., с. 5.



Գծապատկեր 4. Ճառայություններ մատուցողներն ըստ գնորդների և վաճառողների

Գույքի գնահատման կարևորագույն հարցերից մեկը դա գնահատման սկզբունքների ճիշտ ընտրությունն է, որը սխեմատիկորեն կունենա հետևյալ տեսքը (գծապատկեր 5)՝



Գծապատկեր 5. Անշարժ գույքի գնահատման սկզբունքները⁹

Նշենք, որ գնահատման գործընթացը կարգավորված է, որի հիմքում ընկած է գնի որոշումը:
 Այժմ վերը նշվածը ներկայացնենք սխեմայի տեսքով (գծապատկեր 6.).

⁹ Джек Фридман, Николае Ордуэй “Анализ и оценка приносящей доход недвижимости”. Пер. с англ. – М.: Дело, 1997г., с. 13.

Վերոհիշյալ գործընթացները կատարելուց հետո միայն կարելի է որոշել ապահովագրվող գույքի արժեքը, որի հիման վրա սահմանվում է ապահովագրական գումարը:

Ըստ հանրապետությունում գործող օրենսդրության՝ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրությունը պետք է իրականացվի կամավորության սկզբունքով: Սակայն տնտեսվարողները, ցածր վճարունակությամբ պայմանավորված, նախաձեռնություն չեն ցուցաբերում ապահովագրություն իրականացնելու համար: Դրա հետ մեկտեղ, բարձր ռիսկերի հետ կապված, գյուղատնտեսությունում ապահովագրություն չեն ձգտում իրականացնել նաև գործող ապահովագրական ընկերությունները:

Գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության գործընթացի կազմակերպման նպատակով ապահովագրական վճարների չափի հաշվարկման համար մեր կողմից հիմք է ընդունվել ինչպես հանրապետության գյուղացիական տնտեսություններում, գյուղատնտեսական առևտրային կազմակերպություններում ատենախոսության առաջադրանքի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները և հարցումները, այնպես էլ ՀՀ կառավարության 1995թ.-ի հուլիսի 5-ի «Հանրապետությունում գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների գույքի կամավոր ապահովագրության մասին» N 404 որոշմամբ հաստատված օրինակելի կանոններով սահմանված դրույթաչափերը (որոշումը ուժը կորցրած է համարվում 02.07.2001թ-ից):

Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների գույքի (այստեղ գյուղ. մշակաբույսեր) ապահովագրության վճարների առաջարկվող տարեկան դրույթաչափերը ներկայացվում են աղյուսակ 2.-ում:

Աղյուսակ 2.

Գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության գործընթացի կազմակերպման համար առաջարկվող տարեկան դրույթաչափերը

Ապահովագրության ենթակա գույքի անվանումը	Դրույթաչափը, %
Հացահատիկային և հատիկարնղեղեն մշակաբույսեր	13,5
Կարտոֆիլ	11,0
Բանջարանոցային մշակաբույսեր	15,0
Բոստանային մշակաբույսեր	16,0
Հնդավոր պտղատեսակների տնկարկներ	24,0
Կորիզավոր պտղատեսակների տնկարկներ	26,0
Մերձարևադարձային տնկարկներ	17,0
Ընկուզապտուղների տնկարկներ	19,0
Հատապտուղներ	17,0
Խաղողի տնկարկներ	14,5

Բուսաբուծության ճյուղում ապահովագրական վճարների չափի հաշվարկման համար մեր կողմից ելակետ են ընդունվել՝ ՀՀ գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների բերքատվության վերջին 5 տարիների, բերքի գների և ցանքատարածությունների տվյալների միջին ցուցանիշները:

Բուսաբուծության ճյուղում, ըստ առաջարկվող դրույթաչափերի (աղյուսակ 2) և ՀՀ-ում բուսաբուծական հիմնական մշակաբույսերի 2009-2013թթ. բերքատվության, բերքի գների և ցանքատարածությունների տվյալների հաշվարկել ենք ապահովագրական վճարների մոտավոր չափերը ՀՀ գյուղատնտեսությունում տնտեսվարողների՝ 100%, 75%, 50% և 25% ընդգրկվածության տարբերակներով (աղյուսակ 4):

Աղյուսակ 3.

ՀՀ-ում բուսաբուծական հիմնական մշակաբույսերի ապահովագրական արժեքների, ապահովագրական գումարների և ապահովագրական վճարների ցուցանիշները հազ. դրամ

Մշակաբույսերի անվանումը	Ապահովագրական արժեքը	Ապահովագրական գումարը	Ապահովագրական վճարը
Հացահատիկային և հատիկարնղեղեն	57 035 907,2	39 925 135,04	5 389 893,23
Կարտոֆիլ	79 076 716,16	55 353 701,3	6 088 907,14
Բանջարեղեն	85 763 039,04	60 034 127,3	9 005 119,1
Բոստան	11 917 722,24	8 342 405,6	1 334 784,9
Պտուղ և հատապտուղ	148 012 380,0	103 608 666,0	17 613 473,22
Խաղող	43 497 912,5	30 448 538,75	4 415 038,12
Ընդամենը	425 303 677,14	297 712 574,0	43 847 215,71

Ըստ աղյուսակ 4-ում կատարված հաշվարկների, բուսաբուծական մթերքների լիարժեք (100%) ապահովագրության տարբերակով ապահովագրական վճարների ընդամենը գումարը ՀՀ-ում կկազմի 43 847 215,71 հազ. դրամ, ընդ որում առավել բարձր տեսակարար կշիռ են կազմում պտղի և հատապտղի (40,2%), բանջարեղենի (20,5%) և կարտոֆիլի (13,9%) ապահովագրությունը: Աղյուսակում ներկայացված հաշվարկային տվյալներով, գյուղացիական տնտեսությունների ներկայիս վճարունակության պայմաններում, ագրարային ոլորտի բուսաբուծության ճյուղն ամբողջությամբ (100%) ընդգրկելը տնտեսավարողների համար տնտեսապես մատչելի չէ: Սակայն, գյուղացիական տնտեսությունների 50% կամ 75%-ն ապահովագրելու և ապահովագրական վճարների 50%-ը՝ պետության կողմից սուբսիդավորման դեպքում ագրարային ոլորտում գույքային ապահովագրության համակարգի ներդրումը ՀՀ-ում միանգամայն իրատեսական է առաջիկա տարիներին:

Աղյուսակ 4.

ՀՀ-ում բուսաբուծական հիմնական մշակաբույսերի ապահովագրական գործընթացի համար պահանջվող ապահովագրական վճարների գումարի հաշվարկի արդյունքները՝ ապահովագրական դաշտում սուբյեկտների՝ 100%, 75%, 50% և 25% ընդգրկվածության տարբերակներով

Գյուղատնտեսական մշակաբույսերի անվանումը	Ապահովագրական վճարի չափը, հազ. դրամ			
	100% ընդգրկվածության տարբերակ	75% ընդգրկվածության տարբերակ	50% ընդգրկվածության տարբերակ	25% ընդգրկվածության տարբերակ
Հացահատիկային և հատիկարնղեղեն	5 389 893,23	4 042 419,9	2 694 946,6	1 347 473,3
Կարտոֆիլ	6 088 907,14	4 566 680,4	3 044 453,6	1 522 226,8
Բանջարեղեն	9 005 119,1	6 753 839,3	4 502 559,55	2 251 279,8
Բոստան	1 334 784,9	1 001 088,7	667 392,45	333 696,2
Պտուղ և հատապտուղ	17 613 473,22	13 210 104,9	8 806 736,6	4 403 368,3
Խաղող	4 415 038,12	3 311 278,6	2 207 519,06	1 103 759,5
Ընդամենը	43 847 215,71	32 885 411,8	21 923 607,86	10 961 803,9

Գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրությունը բազմաթիվ ռիսկերից բանկ է մի շարք պատճառներով.

- Վարչական ծախսեր.
- Օրենսդրական նորմեր, որոնք սահմանափակում են նոր ապրանքների ներառման հնարավորությունները,
- կապիտալի/պահուստների նկատմամբ բարձր պահանջներ այնպիսի համակարգային ռիսկերի պատճառով, ինչպիսին է երաշտը,
- ռիսկերի գնահատման խնդիրներ, որոնք հազվադեպ են պատահում, սակայն ունեն տարերային բնութագրիչներ,
- վնասի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման վրա կառավարչական որոշումների ազդեցությունը,
- ոչ հարմար տարածքներում կամ անբարենպաստ կլիմայական գոտիներում գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման դեպքում:

Ինչպես նշվեց, բերքի ապահովագրության ավանդական տեսակները պահանջում են վարչական պայմանագրերի բարդ լուծումներ (անդերալթինգ, մոնիթորինգ, վնասի գնահատում ու տեղեկատվության հավաքագրում), այդ պատճառով դրանք հաճախ չեն համապատասխանում զարգացող երկրների համանման չափանիշներին (երկրներին, որտեղ բացակայում է զարգացած ապահովագրական համակարգը): Որպես այլընտրանքային լուծում կարող են համդիսանալ ինդեքսային ապրանքները, որոնք բերքի ավանդական ապահովագրման նկատմամբ ունեն որոշակի առավելություններ՝ ավելի ցածր վարչական ծախսերի և եղանակային տվյալների առկայության դեպքում ապահովագրության ծրագրի ակտուարային հաշվարկների հնարավորության շնորհիվ: Նման դեպքերում արտադրողների ռիսկերի հետ կորելացվող ինդեքսների հաշվարկման համար անհրաժեշտ է բազային տեղեկատվություն, մասնավորապես՝ մշակաբույսերի բերքատվության տվյալներն ըստ եղանակային չափանիշների: Նման տեղեկատվության բացակայության դեպքում անհնար է իրականացնել մշակաբույսերի ապահովագրում:

Ենթակառուցվածքն ու ռիսկային միջավայրը զարգացող երկրներում պահանջում է նոր լուծումներ, որոնք գտնվում են գյուղատնտեսական ավանդական ապահովագրության սահմաններից դուրս: Վերաապահովագրող ընկերությունները (Swiss Re, GE Insurance Solutions) գտնում են, որ ինդեքսային պայմանագրերը զարգացող շուկաների խնդիրների լուծման առավել արդյունավետ ապրանքներն են:

Աղյուսակ 5.

Ինդեքսների հնարավոր տարբերակները¹¹

Ինդեքսի բազիսը	Նկարագրություն
Բերքատվության մակարդակ	Պայմանագրեր ըստ բերքատվության տարածաշրջանային ինդեքսի
Տեղումների մակարդակ	Տեղումների անբավարար կամ ավելցուկային մակարդակ որոշակի ժամանակահատվածում
Ջերմաստիճան	Նույնը, ինչ տեղումների դեպքում, սակայն հիմնվում է ջերմաստիճանի մասին տվյալների վրա
Քանու արագություն	Պայմանագիր՝ ըստ քանու արագության սահմանված մակարդակի գերազանցման

¹¹ Index Insurance Products: A Solution for Emerging Countries? by Dr. Karl J. Schneider, Manager agriculture, is based in Winterthur, Switzerland. 6p., www.geinsurancesolutions.com.

Ինդեքսային ապրանքներն աշխատում են այսպես կոչված “stop-loss” (կորստի սահմանափակման) սկզբունքով, որտեղ տեղեկատվության չեզոք աղբյուրները, ինչ-պիսիք են եղանակային կամ գյուղատնտեսական ծառայությունները, համապատասխան պայմանագրերի համաձայն վճարումներ իրականացնելու նպատակով որոշում են չափանիշների սահմանային մեծությունները, օրինակ՝ տեղումների կամ մշակաբույսերի բերքատվության վերաբերյալ տվյալները: Եթե ինդեքսի սահմանային մեծությունը գերազանցվել է, ապա ինդեքսային պայմանագիր վաճառողը ապահովագրվողին վճարում է որոշակի գումար ըստ պայմանագրի պայմանների: Ինդեքսների հնարավոր տարբերակները ներկայացված են աղյուսակ 5-ում (որոշ լուծումներ, որոնք իրականում կարող են ավելի շատ լինել):

Պայմանագրերի տարբեր տեսակների համար սահմանային մակարդակները ներկայացված են աղյուսակ 6-ում¹²: 0-1 պայմանագրի դեպքում վճարվում է լրիվ ապահովագրական գումարը ելակետային սահմանային մակարդակը գերազանցելու դեպքում: Գլխավոր պայման է հանդիսանում ապահովագրված ինդեքսի գրանցումը չեզոք մարմնի կողմից:

Աղյուսակ 6.

Վճարումներ ըստ պայմանագրի տեսակի

Պայմանագրի տեսակ	Վճարում
0-1 պայմանագիր	Ապահովագրական ամբողջ գումարի վճարում սահմանային մակարդակը գերազանցելու դեպքում
Կառուցվածքային պայմանագրեր	Վճարումներն իրականացվում են ըստ ռիսկի յուրաքանչյուր շերտի
Համամասնական/տոկոսային պայմանագրեր	Վճարումը հիմնվում է փոխհատուցման որոշակի գումարի վրա ըստ ինդեքսի յուրաքանչյուր միավորի (քայլի)


Օրինակ՝ տեղումների 1 մմ-ը կարող է հանգեցնել մշակաբույսի լրիվ կորստին, այդ պատճառով ապահովագրված տարածքում պետք է լինեն բավարար քանակի եղանակային պայմաններն արժանագրող կայաններ:

Գյուղատնտեսությամբ զբաղվող ցանկացած տնտեսավարող սուբյեկտի գործունեության վերլուծությունը թույլ է տալիս ապահովել ապահովագրական պաշտպանվածություն հետևյալ դեպքում.

- գյուղատնտեսական մշակաբույսերի ստացվող բերքի արտադրություն,
- գյուղատնտեսական տեխնիկայի ու տեխնոլոգիական սարքավորման սպասարկում,
- գյուղատնտեսական արտադրանքի պահպանում ու տեղափոխում:

Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի ապահովագրումն իրականացվում է վտանգավոր օդերևութաբանական երևույթների հետևանքով բերքի կորստի և/կամ վնասվելու դեպքում: Թերհավաքված բերքի մեծությունը որոշվում է ըստ առանձին մշակաբույսերի՝ որպես ապահովագրման ընդունված բերքատվության ու դրա իրական մեծության տարբերություն: Ապահովագրական պայմանագրերի կնքման ընթացքը պետք է իրագործվի հետևյալ հաջորդականությամբ. (գծապատկեր 7):

¹² Index Insurance Products: A Solution for Emerging Countries? by Dr. Karl J. Schneider, Manager agriculture, is based in Winterthur, Switzerland. 6p., www.geinsurancesolutions.com.



Գծապատկեր 7. Գյուղատնտեսական կազմակերպությունների համալիր ապահովագրության ժամանակահատվածը

Գյուղատնտեսության ապահովագրական ռիսկերի գնահատման դեռևս բացակայության պայմաններում, ըստ գյուղատնտեսական կենդանիների ցեղատեսակների, ապահովագրական վճարների հաշվարկման համար, դրանց փոխհատուցման հնարավորությունների ու աղբյուրների գնահատման նպատակով, մեր կողմից առաջարկվում են հետևյալ մեթոդական մոտեցումները:

Գյուղատնտեսական կենդանիների ապահովագրության վճարների առաջարկվող տարեկան դրույքաչափերը ներկայացվում են աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. Գյուղատնտեսական կենդանիների ապահովագրության գործընթացի կազմակերպման համար առաջարկվող տարեկան դրույքաչափերը

Ապահովագրության ենթակա գույքի անվանումը	Դրույքաչափը, գյուղ. կենդանիների արժեքի նկատմամբ, %
Խոշոր եղջերավոր անասուններ	3,5
Մանր եղջերավոր անասուններ	5,5
Խոզեր	2,3
Ընտանի թռչուններ	7,0
Մեղվարնտանիքներ	4,0

Գյուղատնտեսական կենդանիների ապահովագրության դրույքաչափերը հաշվարկվել են հիվանդությունների, տարերային աղետների, հրդեհի հետևանքով նրանց անկման կամ հարկադիր սպանոյի դեպքերը: Ապահովագրական դեպքերի թվին են դասվել նաև անասնաբույժի ցուցումով ապահովագրության պայմանագրերով նախատեսված այլ պատճառների կամ վարակիչ հիմանդությունների դեմ պայքարի միջոցառումների կիրառման հետևանքով կենդանիների հարկադիր սպանող: Մատղաչ կենդանիները, որոնք չեն հասել վերը նշված հասակի, ապահովագրվում

են տարերային աղետների, հրդեհի և էլեկտրական հոսանքի ներգործության հետևանքով անկման կամ հարկադիր սպանդի դեպքերում:

Անասնապահության ճյուղում հիմնական գյուղատնտեսական կենդանիների ապահովագրության համար մեր կողմից հիմք է ընդունվել անասնազխաքանակը, գյուղատնտեսական կենդանիների հոտի կառուցվածքը, գյուղատնտեսական կենդանիների տարբեր տեսակների նվազագույն գները և աղյուսակ 7-ում առաջարկված ապահովագրական դրույքաչափերը: Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի համար հիմք են ընդունվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վերջին տվյալները՝ 2014թ. հունվարի 1-ի դրությամբ (աղյուսակ 8):

Աղյուսակ 8.
Գյուղատնտեսական կենդանիների քանակի և մոտավոր արժեքի հաշվարկի ամփոփ տվյալները, 2013թ.¹³

	Գյուղատնտեսական կենդանիների տեսակը	Գլխաքանակ	Միավորի գինը, հազ.դր	Արժեքը, մլն. դրամ
1	խոշոր եղջերավոր անասուններ, որից՝	661 003	-	246 514,9
1.1	կովեր	303 277	400,0	121 310,8
1.2	այլ խոշոր եղջերավորներ	357 726	350,0	125 204,1
2.	Ոչխարներ և այծեր, այդ թվում՝	674 731	-	35 492,58
2.1	ոչխարներ	645 711	-	33 606,28
2.1.1	որից՝ մաքիներ	454 305	60,0	27 258,3
2.1.2	խոյեր	15 144	70,0	1 060,08
2.1.3	այլ հասակի ոչխարներ	176 262	30,0	5 287,9
2.2	այծեր	29 020	65,0	1 886,3
3	խոզեր, որից՝	145 044	-	12 382,25
3.1	խոզամայրեր	31 324	220,0	6 891,3
3.2	վարազներ	2 410	200,0	482,0
3.3	այլ հասակի խոզեր	111 310	45,0	5 008,95
4	Մթերատու թռչուններ	3 321 001	1,5	4 981,5
	ԸՆԴՈՒՄՆԵՐ			299 371,23

Գյուղատնտեսական կենդանիների հոտի կառուցվածքը զնահատվել է հետևյալ մեթոդաբանական մոտեցմամբ՝ խոյերի գլխաքանակը հաշվարկվել է 30 մաքիին մեկ խոյ հարաբերակցությամբ, վարազների գլխաքանակը հաշվարկվել է 13 խոզամայրին մեկ վարազ հարաբերակցությամբ, թռչունների մթերատու գլխաքանակը հաշվարկվել է ընդհանուր գլխաքանակի (4 050 001) 82%-ի չափով:

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ գյուղատնտեսական կենդանիների հաշվարկային արժեքի մեջ գերակշռող տեսակարար կշիռ ունեն խոշոր եղջերավոր անասունները, որը կազմում է ընդհանուր արժեքի 80,5%-ը: Հիմք ընդունելով գյուղատնտեսական հիմնական կենդանիների միջինացված արժեքները և աղյուսակ 7-ում առաջարկվող դրույքաչափերը, ապահովագրական վճարների մոտավոր չափե-

¹³ Պարենային ապահովություն և աղքատություն, 2013 թվականի հունվար-դեկտեմբեր: Վիճակագրական տեղեկագիր, Երևան, 2014թ., էջ 54-58:

որ 33 գյուղատնտեսությունում տնտեսվարողների՝ 100%, 75%, 50%, 25% ընդգրկվածության տարբերակներով, ներկայացված են ստորև (աղյուսակ 9)։

Աղյուսակ 9.

33-ում գյուղատնտեսական կենդանիների ապահովագրական գործընթացի համար պահանջվող ապահովագրական վճարների գումարի հաշվարկի արդյունքները՝ ապահովագրական դաշտում սուբյեկտների՝ 100%, 75%, 50% և 25% ընդգրկվածության տարբերակներով

Գյուղատնտեսական կենդանիների տեսակը	Ապահովագրական վճարի չափը, մլն. դրամ			
	100% ընդգրկվածության տարբերակ	75% ընդգրկվածության տարբերակ	50% ընդգրկվածության տարբերակ	25% ընդգրկվածության տարբերակ
Խոշոր եղջերավոր անասուններ, որից՝	8 628,04	6 471,03	4 314,02	2 157,01
կովեր	4 245,9	3 184,43	2 122,95	1 061,47
այլ խոշոր եղջերավորներ	4 382,14	3 286,6	2 191,07	1 095,54
Ոչխարներ և այծեր, այդ թվում՝	1 952,08	1 464,06	976,04	488,02
ոչխարներ	1 848,33	1 386,25	924,165	462,09
որից՝ մաքիներ	1 499,2	1 124,4	749,6	374,8
խոյեր	58,3	43,73	29,15	14,58
այլ հասակի ոչխարներ	290,83	218,12	145,415	72,71
այծեր	103,75	77,81	51,875	25,93
Խոզեր, որից՝	284,8	213,6	142,4	71,2
խոզամայրեր	158,5	118,875	79,25	39,625
վարագներ	11,1	8,325	5,55	2,775
այլ հասակի խոզեր	115,2	86,4	57,6	28,8
Սթերատու քոյուններ	348,7	261,525	174,35	87,175
Ընդամենը	11 213,62	8 410,215	5 606,81	2 803,405

Աղյուսակ 8-ում և 9-ում ներկայացված հաշվարկային տվյալները վկայում են, որ գյուղացիական տնտեսությունների ներկայիս վճարունակության պայմաններում ինչպես արդեն նշել ենք բուսաբուծության ճյուղի համար, այնպես էլ անասնաբուծության ճյուղն ամբողջությամբ (100%) ապահովագրության մեջ ընդգրկելը մատչելի չէ տնտեսությունների զգալի մասի համար, սակայն գյուղացիական տնտեսությունների 75% կամ 50% ընդգրկվածությամբ և ապահովագրական վճարը 50%-ով պետության կողմից սուբսիդավորման դեպքում, ագրարային ոլորտի ապահովագրության համակարգի ներդրումը 33-ում առաջիկա տարիներին միանգամայն իրատեսական է։ Գյուղատնտեսությունում տնտեսվարողների կողմից կորուստների կանխարգելմանը խթանող քայլ կարող է լինել ապահովագրական ընկերությունների կողմից պատճառված վնասի մինչև 50%-ի կամ 75%-ի փոխհատուցման մեխանիզմի կիրառումը, որը մախաղոյալներ կապահովի վերարտադրության կազմակերպման համար։ Վնասի 100%-ով փոխհատուցման դեպքում տնտեսվարողները շահագրգռված չեն լինի կորուստների հնարավոր կանխման ուղղությամբ։

Սուբսիդավորումից զատ, Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության գործնական ներդրման առումով առավել բարձր հավանականություն ունի գյուղատնտեսական կոդաբերատիվներում փոխադարձ ապահովագրության հիմնադրամանի ձևավորման միջոցով ապահովագրության գործընթացի կազմակերպումը:

Միևնույն ժամանակի պետք է նշել, որ հանրապետության գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի կայացման համար նույնպես պահանջվում է ժառանգած խնդիրների լուծմանն ուղղված պետական համարժեք (աղեկվատ) քաղաքականության մշակումը և իրականացումը: Ընդ որում, կատարած ուսումնասիրությունների արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ ապահովագրական գործուն համակարգի ներդրումը բավական ժամանակատար գործընթաց է, քանի որ դեռևս խիստ ցածր է գյուղացիական տնտեսությունների գերակշռող մասի վճարունակությունը, անկատար է ոլորտում ապահովագրությունը կանոնակարգող օրենսդրությունը, բացակայում է պետության հովանավորչությունը ապահովագրական ընկերություններին (հարկային և այլ արտոնությունների տրամադրման ուղղությամբ), ապահովագրական համակարգի շուկայական տնտեսության պայմաններում գործելու, որոշակի փոխադարձ անվտանգությունը ապահովագրողների և ապահովագրվողների միջև, գյուղատնտեսության վարման ռիսկերի համարած գնահատման բացակայությունը, ապահովագրական ընկերություններում կադրային ապահովվածության որոշակի խնդիրները, հանրապետությունում ռիսկերի գնահատման, վերաապահովագրության և մի շարք այլ կառույցների (ինստիտուտների) դեռևս չկայանալը մի շարք այլ խնդիրներ ու սահմանփակող գործոններ, որոնք մանրամասնվել են նախորդ բաժիններում: Ընդ որում, մեր կարծիքով, հիմնական խոչընդոտող գործոնը գյուղատնտեսությունում տնտեսավարողների անվճարունակությունն է: Դա է պատճառը, որ սույն առենախոսության շրջանակներում առանձնահատուկ կերպով անդրադարձել ենք գյուղատնտեսության և գյուղական զարգացման բնագավառներում ռիսկերի արդյունավետ կառավարման հիմնահարցերին, քանի որ վերջինների զարգացմամբ է պայմանավորված գյուղմթերք արտադրողների վճարունակությունը: Մեր կարծիքով, գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդրումը ՀՀ-ում պետք է իրականացվի փուլային եղանակով:

Ընդհանուր առմամբ կատարված ուսումնասիրությունը, մեր կարծիքով, հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ պետություն-մասնավոր հատված փոխհամագործակցությունը գյուղատնտեսության ապահովագրության բնագավառում դեռևս չի իրագործվում այնպես ֆինանսական միջոցների սղության հետևանքով, որքան պետության կողմից իրականացվող քաղաքականությամբ, ապահովագրության համակարգի ներդրման հրատապության դեռևս ոչ բավարար ընկալման, իրավական հիմքերի անորոշության, համապատասխան ֆինանսական ենթակառուցվածքների թերզարգացման, ինչպես նաև անցումային տնտեսությանը բնորոշ այլ գործոններով:

Առենախոսության շրջանակներում ՀՀ-ի ագրարային համակարգում գույքային ապահովագրության վիճակի և զարգացման ուղիների ուսումնասիրության արդյունքում հանգել ենք որոշակի եզրակացությունների.

1. Ագրարային ոլորտը Հայաստանում բնութագրվում է վարման բարձր ռիսկայնությամբ, քանի որ այլ ոլորտների համեմատությամբ ավելի շատ է ենթարկվում բնակլիմայական պայմանների ազդեցությանը, որով էլ հիմնականում, պայմանավորված է ոլորտի խոցելիությունը: Ռիսկերի խմբում ընդգրկվում են մարդածին գործոնով պայմանավորված, ինչպես նաև բազմաթիվ այլ ռիսկեր, ներառյալ խոշոր օբյեկտների հնարավոր տեխնածին վթարները, հակամարտությունները, շրջակա միջավայրի աղտոտվածությունը, էկոհամակարգերի խաթարումը, սննդամթերքի անվտանգությանն առնչվող ռիսկերը, ինչպես նաև միջազգային շուկայում

պարենամթերքի գների անկայունությունը, ռեսուրսների, այդ թվում էներգակիրների գնաճը, որը կարող է հանգեցնել երկրի գյուղատնտեսության մրցակցային հնարավորությունների նվազմանը:

2. Հանրապետության գյուղատնտեսությունում ապահովագրական շուկայի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ գյուղացիական տնտեսությունների կողմից տվյալ ծառայության նկատմամբ պահանջարկը դեռևս մեծ չէ, ինչը բացատրվում է մի շարք հանգամանքներով, որոնցից մասնավորապես կարելի է առանձնացնել գյուղմթերք արտադրողների վճարունակության ցածր մակարդակը:
3. Շուկայական հարաբերությունների արմատավորումը զուգորդվում է մրցակցային միջավայրի ձևավորմամբ, տնտեսության կառուցվածքում մասնավոր հատվածի ընդլայնմամբ, ձեռնարկատիրական գործունեության խթանման շնորհիվ ներդրումների ներհոսքի ավելացմամբ: Նշվածի հետ մեկտեղ տեղի է ունենում պարենամթերքի շուկայի որոշակի անկանխատեսելիությունը, տնտեսավարողների որոշ խմբերի անվճարունակության բարձրացումը (սննամեկացումը), հավաստի տեղեկատվության պակասի և մարքեթինգային աշխատանքների անկատարության հետևանքով իրացման հիմնահարցերի ի հայտ գալը: Ժամանակակից մենեջմենթի իրականացման առնչվող բարդությունները և բազմաբնույթ այլ սահմանափակող գործոնները պայմանավորում են ագրարային ոլորտում ռիսկերի արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը և հրատապությունը:
4. Ագրարային ոլորտում ռիսկերի կառավարման բնագավառում միջազգային փորձի վերլուծությունը վկայում է, որ այն առավել արդյունավետ է իրագործվում զարգացած երկրներում, որտեղ գործում են համապատասխան ինստիտուցիոնալ կառույցներ, կատարվում են զգալի ծավալներով ներդրումներ, առանձնակի ուշադրություն է դարձվում ռիսկերի կառավարման բնագավառում գիտամեթոդական աշխատանքների կատարմանը, տեղեկատվական ու խորհրդատվական համակարգերի ձևավորմանը, ռեսուրսների կենտրոնացմանը, կանխարգելիչ բազմաբնույթ միջոցառումների իրականացմանը: Ծիշտ է նաև այն պնդումը, որ այն երկրները, որոնք ռիսկերի կառավարման բնագավառում վարում են համարժեք քաղաքականություն, հատկացնում են անհրաժեշտ ֆինանսական, մյուստեխնիկական և այլ ռեսուրսներ, ընդօրինակում են այն բնագավառում միջազգային առաջավոր փորձը՝ զարգանում են ավելի արագ տեմպերով, ուստի ապահովում են բնակչության ավելի լավ կենսապայմաններ և կյանքի ավելի բարձր որակ, այդ իսկ պատճառով գյուղատնտեսական ապահովագրության միջազգային փորձի ուսումնասիրությունը, վերլուծությունը և տեղայնացումն ունի կարևոր կիրառական նշանակություն:
5. Կատարված ուսումնասիրությունները հիմք են հանդիսանում եզրակացնելու, որ ագրարային ոլորտում գույքային ապահովագրության բնագավառում պետություն-մասնավոր հատվածի համագործակցությունը դեռևս չի իրականացվում բավարար չափով ոչ այնքան ֆինանսական միջոցների սղության հետևանքով, որքան պետության կողմից իրականացվող քաղաքականությամբ ապահովագրական համակարգի ներդրման հրատապության ոչ բավարար ընկալման, ինչպես նաև իրավական հիմքերի անորոշությանը, համապատասխան ֆինանսական ենթակառուցվածքների թերզարգացմամբ (ներկայումս հանրապետությունում գործում են ընդամենը 7 ապահովագրական ընկերություն), ու անցումային տնտեսությանը բնորոշ այլ գործոնների բացասական ազդեցության հետևանքով:
6. Ագրարային ոլորտում գույքային ապահովագրության ներդրման և զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել ֆերմերներից կազմված կոոպերատիվներ: Ֆերմերների կոոպերացման միջոցով վնասների և կորուստների փոխհատուցման

համակարգը ներդնելու նպատակով անհրաժեշտ է նախ կատարել գյուղատնտեսական ռիսկերի ուսումնասիրություն և գնահատում, ինչպես նաև մշակել դրանց կառավարման հիմնական մեթոդները: Նշված գործընթացի իրականացումը հնարավորություն կտա՝

ստեղծել գյուղատնտեսական ռիսկերի գծով Հայաստանի յուրաքանչյուր տարածաշրջանի տվյալների բազա,

ճշգրիտ գնահատել յուրաքանչյուր համայնքում առկա գյուղատնտեսական ռիսկերի մեծությունները,

հիմնավորել ֆերմերների վնասների փոխհատուցման գործընթացը մատչելի դարձնելու ուղիներն ու հնարավորությունները,

կատարել ռիսկերի հավանականության հաշվարկներ մաթեմատիկական մեթոդների կիրառմամբ՝ բացահայտելով առանձին տարիների ընթացքում դրանց տեղի ունենալու օրինաչափությունները:

7. Հաշվի առնելով, որ ապահովագրական գործուն համակարգի ներդրման հիմնական նախապայմանը՝ գյուղատնտեսության վարման ներկայիս պայմաններում ապահովագրական ռիսկերի համապարփակ գնահատումն է, ըստ ապահովագրական դաշտում ընդգրկվող գյուղատնտեսական մշակաբույսերի և կենդանիների, առաջարկվում է պետական միջոցների հաշվին ազդարարյին ոլորտում ապահովագրական ռիսկերի համատարած գնահատման ծրագրերի իրականացումը:

8. Հաշվի առնելով ազդարարյին ոլորտում գույքային ապահովագրության գործուն համակարգի ներդրման ծախսատարությունը և գործընթացի խթանումը սահմանափակող գործոնները, գտնում ենք, որ այն պետք է իրականացվի փուլային եղանակով և այդ ուղղությամբ պետական քաղաքականության գերակայությունները հանդիսանալու են.

ապահովագրական պատահարների (ղեպքերի) գնահատման և գրանցման կառույցների ձևավորումը, ինչը մի կողմից անհրաժեշտ է ապահովագրող ընկերությունների բնականոն և հուսալի գործունեության համար և, մյուս կողմից, տնտեսվարողների (ապահովադիրների) շահերի պաշտպանության (պատճառած վնասի արդարացի գնահատման) համար: Գնահատման կենսունակ կառույցների ձևավորման նպատակով պահանջվելու է համապատասխան ազգային ստանդարտների մշակում և դրանց համապատասխանեցումը միջազգային չափանիշներին.

անհրաժեշտ տեղեկատվական-վիճակագրական բազայի ստեղծումը կարևոր նախապայման է ոչ միայն ապահովագրական գործընթացների խթանման, այլ բնագավառում սպառողների շահերի պաշտպանության, այլ նաև՝ ակտուարական ինստիտուտի կայացման տեսանկյունից, քանի որ ակտուարական ճշգրիտ հաշվարկը հնարավորություն է ընձեռում համատեղել ապահովագրողների և ապահովագրվողների տնտեսական չափերը,

գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ինտեգրումը միջազգային ապահովագրական շուկային արդիական է թերևս այն պատճառով, որ հնարավորություն է ընձեռվելու դիվերսիֆիկացնել խոշոր ռիսկերը (երաշտ, երկրաշարժ և այլն) տեղական և արտերկրի ապահովագրական ընկերությունների միջև ինտեգրումն անհրաժեշտ է նաև, որպեսզի տեղական գյուղմթերք արտահանողները պաշտպանված լինեն նաև պարենամթերքի արտաքին շուկաներում:

9. Ապահովագրության գործընթացի պետական կարգավորման և վերահսկողության բնագավառներում իրականացվելիք քաղաքականությունը պետք է համարժեք լինի հանրապետությունում ազդարարյին ոլորտում գույքային ապահովագրության ռիսկերին: Այդ մտեցումը կարևորվում է այն պատճառով, որ Հայաստանում գործող ապահովագրական ընկերությունները դեռևս չունեն բավարար փորձ,

հմտություններ և ռեսուրսներ, որպեսզի կարողանան արդյունավետ մրցակցել օտարերկրյա խոշոր (կայացած) ընկերությունների հետ: Չտնուում ենք, որ նշված հիմնահարցերի լուծումը պահանջում է վերահսկողության և հաշվետվության համակարգը համապատասխանեցնել IAS և IFRS միջազգային կազմակերպությունների ստանդարտների պահանջներին: Հանրապետությունում դեռևս չի ձևավորվել գյուղատնտեսության ապահովագրության «մշակույթը» և այդ գործընթացը բավականին ժամանակատար է, ուստի այդ ուղղությամբ նույնպես իրականացվող միջոցառումները հանդիսանալու են ապահովագրության բնագավառում իրականացվելիք բաղաբաղանդյուն մախընտրելի ուղղություններից մեկը:

10. Հիմք ընդունելով կատարված ուսումնասիրությունների արդյունքում առաջարկված դրույքաչափերը և ապահովագրական պայմանագրերով ծածկվող հնարավոր պատահարները ըստ ՀՀ հիմնական մշակաբույսերի և կենդանիների ապահովագրական վճարների չափերի տարբերակված տնտեսավարող սուբյեկտների (100%, 75%, 50% և 25% ընդգրկվածության դեպքում) բուսաբուծության մեջ կազմել են համապատասխանաբար՝ 43,85 մլրդ դրամ (100% ընդգրկվածության դեպքում), 32,9 մլրդ դրամ (75%), 21,9 մլրդ դրամ (50%) և 10,96 մլրդ դրամ (25%): Նույն մեթոդական մոտեցմամբ հաշվարկված գյուղատնտեսական կենդանիների ապահովագրական վճարների չափերը անասնաբուծության մեջ կազմել են համապատասխանաբար՝ 11,2 մլրդ դրամ (100% ընդգրկվածության դեպքում), 8,4 մլրդ դրամ (75%), 5,6 մլրդ դրամ (50%) և 2,8 մլրդ դրամ (25%): Ուստի, գտնուում ենք, որ գյուղացիական տնտեսությունների 50% կամ 75%-ն ապահովագրելու և ապահովագրական վճարների 50%-ը պետության կողմից սուբսիդավորման դեպքում ազարային ոլորտում գույքային ապահովագրության համակարգի ներդրումը ՀՀ-ում միանգամայն իրատեսական է առաջիկա տարիներին:

Ատենախոսության հիմնական դրույթները և ստացված արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում

1. Մանուչարյան Մ. Գ. Շուկայական տնտեսության պայմաններում գյուղատնտեսության ապահովագրության մի քանի հարցեր: // Ազրոգիտություն, №11-12 նոյեմբեր-դեկտեմբեր, 2007թ. - էջ 503-506
2. Մանուչարյան Մ. Գ. Տարերային աղետների ազդեցությունը գյուղատնտեսության ապահովագրության վրա: // Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, №6 Երևան, 2010թ. - էջ 200-205
3. Մանուչարյան Մ. Գ. Գույքային ապահովագրության հիմնախնդիրը ՀՀ-ում: // Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, №3 Երևան, 2011թ. էջ 160-170
4. Петросян С.А., Манучарян М. Г. Система страхования от рисков инвестиционной деятельности в Армении – важная составляющая инвестиционного климата. // Висник, Полтавской Державной Аграрной Академии, № 1, 2013 с.134-137
5. Մանուչարյան Մ. Գ. Գույքային ապահովագրության ներդրման ուղիները և զարգացումը ՀՀ բուսաբուծության մեջ: // Ֆինանսներ և էկոնոմիկա #8(158), Երևան, 2013թ. - էջ 14-16
6. Բայադյան Ա.Հ., Մանուչարյան Մ.Գ. ՀՀ անասնաբուծության ոլորտում գույքային ապահովագրության ներդրման անհրաժեշտությունը և ուղիները // «ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածու 3(19): Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարանի հրատարակչություն, Երևան, 2013թ. էջ 111-117

Состояние и пути развития имущественного страхования в аграрной системе
Республики Армения.

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 - "Финансы, бухгалтерский учет".

Защита диссертации состоится 29-ого апреля 2014 года в 15³⁰ часов на заседании Специализированного Совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна, 128.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена состоянию и путям развития страхования имущества в аграрной системе РА в условиях рыночных отношений.

Состояние и решение проблем развития страхования имущества в аграрной системе Республики Армения является основной предпосылкой устойчивого и сбалансированного развития аграрного сектора экономики страны.

Постепенное решение многих проблем в этой отрасли в значительной степени будет способствовать повышению конкурентоспособности аграрного сектора, улучшению жизненных условий хозяйствующих субъектов отрасли, увеличению объема производства сельскохозяйственных продуктов (сырье), развитию сельских районов и, в итоге, повышению уровня продовольственной безопасности страны и сокращению бедности в сельских районах. Поэтому необходимо, в условиях анализа созданных и прогнозируемых комплексных ситуаций, разработать такую стратегию, реализация которой позволит эффективно предотвратить или смягчить отрицательное воздействие препятствующих факторов и, по возможности, правильно использовать природно-экономический потенциал сельскохозяйственного производства.

Основная цель диссертации – предложить основные направления и механизмы политики постепенного решения существующих проблем, с учетом комплексного изучения текущей ситуации имущественного страхования в аграрном секторе, выявления препятствующих факторов, распространении международного опыта.

Для реализации указанных целей предложены следующие задачи:

- изучить общую характеристику рисков в аграрном секторе и проанализировать тенденции управления рисками в отрасли,
- изучить проблемы рисков страхования в аграрном секторе, управление ими, возможности распространения международного опыта.

изучить возможные пути применения имущественного страхования в управлении рисками деятельности сельскохозяйственных организаций, выявить риски, связанные с урожаем сельскохозяйственных культур и животными. проанализировать международный опыт управления ими с помощью страхования и возможности его распространения, разработать и предложить методологические подходы и механизмы, способствующие внедрению имущественного страхования в аграрном секторе РА и обосновать их необходимость, выявить и предложить пути внедрения и развития имущественного страхования в аграрном секторе РА.

Основная новизна результатов научного исследования заключается в том, что в результате системного изучения и анализа эффективности внедрения имущественного страхования в аграрном секторе РА, даны основные пути сотрудничества государственного и частного сектора, взаимного страхования, субсидирования, а также основные направления реализуемой политики. Основные результаты научных исследований связаны с предложенными в рамках исследования задачами, в частности:

выявлены особенности имущественного страхования в аграрном секторе РА, связанные с рисками стихийных и природных бедствий (в частности, сельскохозяйственных культур и животных), предложены возможные пути внедрения системы страхования,

выявлены факторы, препятствующие прогрессу аграрного сектора в контексте уточнения осуществляемой политики в направлении имущественного страхования и разработан перечень факторов (осуществление государственной протекционистской политики в отношении страховых компаний, распространение международного опыта, улучшение работ маркетингового, а также информационного, консультационного обслуживания, включая оценку рисков посредством осуществления государственной целевой программы и т.д.), в значительной степени способствующих стимулированию процесса страхования аграрного сектора,

обоснована необходимость государственной поддержки в РА в направлении диверсификации страховых рисков, разработаны методологические подходы, направленные на формирование правовой и экономической среды, внедрение поэтапной системы сельскохозяйственного страхования и постепенное решение существующих в отрасли проблем,

выявлено и обосновано создание сельскохозяйственных кооперативов, для внедрения и развития имущественного страхования в аграрном секторе и в соответствии с ними предложены возможные пути внедрения для организации взаимного страхования в них.

В результате исследования сделаны выводы и предложения, применение которых может способствовать внедрению имущественного страхования в аграрном секторе РА (в частности, сельскохозяйственных культур и сельскохозяйственных животных).

Property Insurance Situation and Development Ways of the Agrarian System of the Republic of Armenia.

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03 – “Finance, Accounting”.

The defense of the thesis will take place on April 29, 2014 at 15⁰⁰ o'clock at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 M. Nalbandyan Street, Yerevan 0025.

ABSTRACT

Thesis is devoted to the property insurance situation and the development ways of the agrarian system of the RA in terms of market relations.

The major problems solving of property insurance situation and development of Armenian's agrarian sector are the basic preconditions for sustainable and balanced development of the agrarian sector of the RA economy. The gradual solution of many problems in this field will greatly contribute to the raising competitiveness of agrarian sector, improvement of living conditions of economic entities in the sphere, agricultural products (raw material) production volumes increase, the development of rural areas and as a resulting of the increasing level of food security and rural poverty reduction. Therefore it is necessary in the analysis result of the created and projected situation work out policy, which realization will enable effective prevent or mitigate negative effects of inhibiting factors and properly use the potential of natural economy existing in agricultural production possibly.

The main purpose of the thesis, a comprehensive study of the current situation in the agrarian sector's property insurance, identifying inhibiting factors, as a result of localization of the international experience, suggest basic ways of solving existing problems in a gradual and consistent mechanisms for processing.

For the implementation of the mentioned targeting are recommended the following main issues:

- explore the total characteristic of risks of the agrarian sector and analyze the trends of the management sphere,
- explore the main issues and the management of risks of the agrarian sector through the insurance international experience and localization of that sphere,
- explore the possible ways of the application of property insurance of agricultural organizations and farmers associated with risk management,

reveal the harvest of agricultural crops, animals – related risks and analyze international experience and localization capabilities of their management through the insurance,
process and offer methodological approaches and mechanisms which promote property insurance introduction to the agrarian sector of RA,
reveal and offer property insurance introduction and ways of development in agrarian sector of RA.

The main scientific novelty of the results of research lies in the fact that in systemic study and analysis that conditioning prerequisites of the RA agricultural sector's property insurance introduction effectiveness are given public-private sector cooperation, mutual insurance, subsidy, as well as the main directions of the implementing policies. The main results of scientific research are conditioned within the proposed problems of research, particularly:

disclosed features of property insurance of the agrarian sector of RA due to elemental and natural disasters risks (particularly, agricultural crops harvest and farm animals) and offered possible ways of introduction of insurance system,

disclosed the factors (implementation of state protectionist policies in respect of the insurance companies, the localization of international experience, improve marketing works, as well as informational, counseling services, including risk assessment through the implementation of the state program, etc.), that are hampering the progress of agrarian sector in the context of clarifying policy aimed at property insurance and developed list of factors which are greatly contribute to the promotion of the insurance process in agrarian sector,

justified the need of state support in RA towards diversification of insurance risks and have been made developed methodological approaches, which are aimed at the legal and economic field formation, the introduction of the agricultural insurance system stepwise and gradual solution of the existing problems in the sphere,

reveal and justified the creation of agricultural cooperatives for introduction and development property insurance in the agrarian sector and in line with those offered possible ways of introduction for organization of mutual insurance in them.

As a result of the surveys are done conclusions and suggestions, which application may contribute to property insurance introduction in agrarian sector of RA (particularly agricultural crops harvest and animals).

